Հավելված N 7
ՔԿԶՆԾ Տրանշ 2 Տիչինա-Աշտարակ
ճանապարհահատվածի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությունը փոխառություն է ստացել Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (ՔԿԶՆԾ)-Ծրագիր 2-ը ֆինանսավորման համար: Ծրագրի գլխավոր բաղադրիչներից մեկը հասարակական տրանսպորտի ցանցի վերակազմավորումն է հիերարխիական ցանցի: ՔԿԶՆԾ Ծրագիր 2-ի նպատակն է լրացնել Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երեք բացակայող ճանապարհային հանգույցները՝

(i) Արգավանդ – Շիրակ ճանապարհային հանգույց՝ 1.3կմ երկարությամբ. ծրագիծն անցնում է Կարմիր Բլուր հնագիտական վայրով,
(ii) Բաբաջանյան-Աշտարակ մայրուղի՝ 6.5 կմ երկարությամբ, որ ներառում է Բաբաջանյան-Հին Սիլիկյան և Հին Սիլիկյան-Աշտարակ ճանապարհային հատվածները,
(iii) Դավթաշեն-Աշտարակի մայրուղի՝ 3.1կմ երկարությամբ:

Ծրագրի իրականացման գրասենյակը (ԾԻԳ), որ հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) անունից, հանդիսանում է ծրագրի իրականացման և վճարող գործակալությունը, ինչպես նաև սույն հանձնարարականի Պատվիրատուն: ԵՔ-ն սերտորեն կհամագործակցի Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ, որը սույն վարկի շրջանակներում հանդիսանում է գործադիր մարմին:

Վերոնշյալ 3 ճանապարհային հանգույցները կհանգեցնեն հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ): Ավելի քան 200 ազդեցության ենթարկված անձանց (ԱԵԱ) էական ՀՕՏ-ի անհրաժեշտություն կառաջանա. վերջիններս պետք է տեղահանվեն ֆիզիկապես և/կամ տնտեսապես:

ԵՔ-ն պատրաստել է Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ (ՀՕՏՇ) ամբողջ ԲՖԳ-ի համար: ՀՀ կառավարությունը և ԱԶԲ-ն փաստաթուղթը հաստատել են 2010թ. սեպտեմբերի 24-ին, սակայն այնուհետև վերջինս վերանայվել և հաստատվել է 2012թ. մարտի 7-ին (ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային

ծրագրի՝ հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և փոխհատուցման առանձին տեսակների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 273-Ն որոշում): Առաջնորդվելով ՀՕՏՇ-ով՝ կազմվել են իրականացման ենթակա Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրերը (ՀՕՏԾ):

Ծրագիր 2-ի համար ՀՕՏԾ-ների պատրաստումն ու իրականացումը հեշտացնելու նպատակով Ծրագրի տարածքը բաժանվել է հետևյալ 4 մասերի՝

1. Արգավանդ-Շիրակ ճանապարհային հանգույց,
2. Բաբաջանյան-Հին Սիլիկյան,
3. Հին Սիլիկյան-Աշտարակի մայրուղի
4. Դավթաշեն –Աշտարակի մայրուղի

Արգավանդ-Շիրակ ճանապարհային հանգույցի ՀՕՏԾ-ն պատրաստվել է Ծրագիր 1-ի շրջանակներում և ԱԶԲ-ի կողմից հաստատվել 2014թ. հունվարի 9-ին: Անբավարար ֆինանսական միջոցների պատճառով Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածը Ծրագիր 1-ից տեղափոխվել է Ծրագիր 2:

Բաբաջանյան-Հին Սիլիկյան, Հին Սիլիկյան-Աշտարակի մայրուղի, Դավթաշեն –Աշտարակի մայրուղի ճանապարհային հատվածների համար կպատրաստվեն առանձին ՀՕՏԾ-ներ:

ՀՕՏԾ-ների իրականացումը ենթակա կլինի և՛ ներքին, և՛ արտաքին մոնիթորինգի: Ներքին մոնիթորինգը պետք է իրականացվի ԾԻԳ-ի կողմից: ՀՕՏԾ-ների արտաքին մոնիթորինգը պետք է իրականացվի արտաքին մոնիթորինգի որևէ գործակալության կողմից: Արգավանդ-Շիրակ հատվածի ՀՕՏԾ-ի արտաքին մոնիթորինգի իրականացումը Ծրագիր 1-ի շրջանակներում ԾԻԳ-ի կողմից արդեն իսկ ներառված է Խորհրդատուի առաջադրանքների մեջ: Բաբաջանյան-Հին Սիլիկյան, Հին Սիլիկյան-Աշտարակի մայրուղի, Դավթաշեն – Աշտարակի մայրուղի ճանապարհային հատվածների արտաքին մոնիթորինգի իրականացումը կհանձնարարվի այն ԱՄԳ-ին, որը ԾԻԳ-ի կողմից կներգրավվի սույն տեխնիկական առաջադրանքի շրջանակներում:

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱԶԲ-ի հարկադիր տարաբնակեցման (ՀՏ) քաղաքականությունը և ՀՕՏՇ-ն պահանջում են, որ ԱՄԳ-ի կողմից արտաքին մոնիթորինգ իրականացվի ՀՕՏԾ-ների իրականացմանը զուգահեռ: Արտաքին մոնիթորինգի հիմնական նպատակն է գնահատել ՀՕՏԾ գործընթացների համապատասխանությունը, արդյունավետությունը և ազդեցությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում առաջարկել որևէ շտկող միջոցառումներ: ԱՄԳ-ը պետք է անցկացնի տարաբնակեցման իրականացման անկախ ուսումնասիրություն՝ որոշելու, թե արդյոք նախատեսված նպատակներն իրականացվում են, թե ոչ: Եթե ոչ, ապա ինչ շտկող միջոցառումներ են անհրաժեշտ: Մասնավորապես՝ ԱՄԳ-ը պետք է արտաքին

կերպով (ոչ ներքին կերպով) ուսումնասիրի ՀՕՏ գործընթացը՝ մոնիթորինգի տվյալները ստուգելու, ՀՕՏԾ իրականացումը և իրականացմանը հաջորդող գործընթացները վերահսկելու նպատակով, խնդիրները և համապատասխանությանը առնչվող հարցերը հայտնաբերելու, ինչպես նաև համապատասխան լուծումներ առաջարկելու նպատակով: ԱՄԳ-ը նաև պետք է վերահսկի և ստուգի ՀՕՏԾ իրականացումը՝ որոշելու համար, թե արդյոք տարաբնակեցման նպատակներն իրականացվում են, ապրուստի միջոցները և կենսամակարդակը վերականգնվել են (և ինչ չափով), թե ոչ, ինչպես նաև տրամադրել առաջարկություններ բարելավման համար:

Արտաքին մոնիթորինգը հանգեցնում է երկու տեսակի գործողությունների՝ ա) ՀՕՏԾ-ների իրականացման և փոխհատուցումների տրամադրման կարճաժամկետ մոնիթորինգ, բ) ՀՕՏԾ-ների տարաբնակեցման հետևանքների երկարաժամկետ գնահատում:

Մասնավորապես՝ պետք է իրագործվեն հետևյալ նպատակները.

1. Ստուգում, որ տարաբնակեցումն իրականացվել է հաստատված ՀՕՏՇ-ի, ՀՕՏԾ-ների, ԱՔՀ-ի (2009) և ՀՀ օրենսդրության համաձայն, և՛ բովանդակային, և՛ ընթացակարգային մակարդակներում,
2. ՀՕՏԾ իրականացման գործընթացի մոնիթորինգ՝ հայտնաբերելու համար իրականացման ռազմավարության թույլ և ուժեղ կողմերը, մասնավորապես՝ ՀՕՏԾ իրականացման ժամանակացույցերի, ինչպես նաև ՀՕՏ աշխատանքներին առնչվող թիրախների ձեռքբերման մոնիթորինգ և գնահատում,
3. ՀՕՏԾ իրականացման՝ կիրառված մոտեցումների արդյունավետության գնահատում,
4. ԱԵԱ-երի/ԱԵՏՏ-ների հետ (մասնավորապես խոցելի) խորհրդատվական գործընթացի գնահատում՝ ներառյալ ազդեցության ենթարկված կողմերի համար հասանելի իրավաբանական օգնության և բողոքների լուծման գործընթացների համարժեքությունը և արդյունավետությունը, տեղեկատվության տարածումը, ՀՕՏԾ պատրաստման և իրականացման փուլերի վերաբերյալ հանրային լսումները և այլն,
5. ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-երի և հատկապես խոցելի խմբերի վրա Ծրագրի ազդեցության վերլուծություն և ընդունված մեղմացնող միջոցառումների արդյունավետության՝ ներառյալ ԱԵԱ-երին տրամադրված փոխհատուցման համարժեքության գնահատում, ԱԵԱ-երի/ԱԵՏՏ-ների ապրուստի միջոցների և կենսամակարդակի վերականգնման գնահատում,
6. Առաջարկությունների և շտկող միջոցառումների մշակում, ըստ անհրաժեշտության:

Արտաքին մոնիթորինգի գլխավոր առաջադրանքներն են՝

1. Մեթոդաբանության մշակում՝ նշելով մանրակրկիտ նպատակները և կիրառվելիք մեթոդները, ընտրանքային մոտեցումները, հատուկ մոնիթորինգի ցուցանիշները՝ ՀՕՏԾ-ի, հաշվետությունների ներկայացման պահանջներին համապատասխան և այլն,

2. Անցկացնել ելակետային ուսումնասիրություն, եթե ՀՕՏԾ-ներում համարժեք բազա առկա չէ,
3. Ուսումնասիրել և հաստատել Ծրագիր 2-ի ՀՕՏԾ իրականացման առաջընթացը և իրականացնող գործակալության համար պատրաստել եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև ներդրում ապահովել մոնիթորինգի կիսամյակային հաշվետվության մեջ ՀՕՏԾ իրականացման ընթացքում,
4. Անցկացնել գնահատման հետազոտություն՝ ՀՕՏԾ համապատասխանության հաշվետվության պատրաստման համար,
5. Անցկացնել ՀՕՏԾ-ին հաջորդող իրականացման գնահատման հետազոտություն ՀՕՏԾ իրականացման ավարտից հետո մոտավորապես մեկ տարվա ընթացքում,
6. Տրամադրել առաջարկություններ և շտկող միջոցառումներ, երբ և որտեղ անհրաժեշտ է:

3 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԱՄԳ-ի աշխատանքները կարելի է բաժանել 2 ուղղությունների՝

1. Կարճաժամկետ մոնիթորինգ և
2. Երկարաժամկետ գնահատում:

3.1 ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Կարճաժամկետ մոնիթորինգը կամ ՀՕՏԾ-ների իրականացման համապատասխանության ուսումնասիրությունը կիրականացվի յուրաքանչյուր ՀՕՏԾ իրականացմանը զուգահեռ և կհանգեցնի լայնածավալ դաշտային այցելությունների և ԱԵԱ-երի հետ հաղորդակցման: Այս առաջադրանքի արդյունքում կպատրաստվի Համապատասխանության հաշվետվություն յուրաքանչյուր ՀՕՏԾ-ի համար՝ նշելով արդյոք փոխհատուցումների տրամադրման ծրագիրն իրականացվել է ՀՕՏԾ պայմանների և ԱԶԲ քաղաքականության հիման վրա, և արդյոք ԱԵԱ-երը գոհ են, թե՝ ոչ: Համապատասխանության հաշվետվությունը կներկայացվի ԾԻԳ՝, իրականացնող գործակալություն (ԵՔ), և ԱԶԲ: Համապատասխանության հաշվետվության հաստատումը ԱԶԲ-ի կողմից կլինի պայման շինարարական աշխատանքների մեկնարկի համար: ԱՄԳ-ի կարճաժամկետ մոնիթորինգի առաջադրանքը ներառում է հետևյալ հատուկ մեթոդներն ու գործողությունները՝

- Փաստաթղթերի վերլուծություն և երկրորդական տվյալների վերլուծություն,
- Դիտարկումներ,
- Տնային տնտեսությունների ուսումնասիրություն,
- Մասնակցային արագ հարցում:

3.2 Փաստաթղթերի վերլուծություն

ՀՕՏԾ իրականացման առաջին փուլում պետք է ստուգվեն ազդեցության ենթարկված բոլոր հողատարածքների/կառույցների/ձեռնարկատիրական գործունեությունների փաթեթների ամբողջականությունը: Մասնավորապես՝ փաստաթղթերի վերլուծությունը կանդրադառնա հետևյալ հիմնական ոլորտներին՝

- Իրականացնող գրասենյակում առկա տեղեկատվության վերանայում՝ ներառյալ ԱԵԱ-երի փաստաթղթերի փաթեթները, ստորագրման ենթակա պայմանագրերը և այլն, ինչպես նաև դրանց ճշգրտության հաստատում,
- Հավաքված տեղեկատվության փաստաթղթերի գնահատում, այն է՝ արձանագրություններ, հարցաթերթիկներ, հատակագծեր, անձնագրեր և այլ հասանելի տեղեկատվություններ, ներառյալ՝
  - Հավաքագրած տվյալների ամբողջականությունը,
  - Հավաքագրված տվյալների ճշգրտությունը,
- Իրականացնող գործակալության կողմից խորհրդատվության տրամադրման և մասնակցության, ինչպես նաև տեղեկատվության տարածման գործողությունների գնահատում,
- Սահմանված ԲԼՄ ընթացակարգերի և դրանց իրականացման գնահատում և
- Թերությունների հայտնաբերում, եթե առկա են:

Վերապահում:

ԱՄԳ չունի որևէ մանդատ՝ իրականացնելու առաջադրանքներ, որոնք պահանջում են ՀՀ օրենսդրությամբ հատուկ արտոնագիր՝ ներառյալ օտարման ենթակա գույքերի գնահատում կամ տարածքների չափագրում: Այնուամենայնիվ, պայմանագրի արժեքը ներառում է պայմանական գումարներ, որ նախատեսված են այն դեպքերի համար, երբ ԱՄԳ-ն կդիմի անկախ արտոնագրված ընկերության՝ անկախ կամ վիճարկելի գնահատում իրականացնելու կամ չափագրման համար:

3.3 Տնային տնտեսությունների ուսումնասիրություն

ԱԵՏՏ-երի ուսումնասիրությունը կվերաբերի հողի օտարման և տարաբնակեցման ամբողջ գործընթացին (դրա տևողությունը, համապատասխանությունը ԱՋԲ ԱՔՀ-2009-ի, ՀՀ կանոնակարգերի, ՀՕՏՇ-ի և ՀՕՏԾ-ի պահանջներին, փոխհատուցումների վճարումները, բողոքները, ազդեցության ենթարկված խոցելի խմբերի կարգավիճակը և այլն) և նպատակների իրականացման ծավալին: ԱՄԳ-ն յուրաքանչյուր ՀՕՏԾ-ի համար կընտրի ԱԵՏՏ-ները. ընտրանքները պետք է մշակվեն այնպես, որ ներառեն ԱԵՏՏ-ների բոլոր տեսակները, ըստ դրանց վրա ազդեցության տեսակի: Տնային տնտեսությունների

ուսումնասիրության մեջ կկիրառվի հատուկ մշակված հարցաթերթիկ՝ հավաքագրված տեղեկատվության ստանդարտացման նպատակով: Մասնավորապես՝ հարցաթերթիկը կանդրադառնա հետևյալ հիմնական ոլորտներին՝ ԱԵՏՏ-երի փաստաթղթերի փաթեթներ, ՀՕՏԾ-ի մշակման և իրականացման գործընթացի իրազեկվածություն, ՀՕՏԾ-ի իրականացման ազդեցությունները և վճարված փոխհատուցումները, բողոքները և ընդհանուր բավարարվածությունը: Տնային տնտեսությունների ուսումնասիրության արդյունքները կներառվեն Համապատասխանության հաշվետվությունների մեջ, որոնք ԱՄԳ-ը կպատրաստի բոլոր ՀՕՏԾ-ների համար:

3.4 Դիտարկումներ

ՀՕՏ-ի հետ կապված գործողությունների (հանրային լսումներ, հանդիպումներ, իրականացում և այլն), ինչպես նաև ազդեցության ենթարկված անձանց կենսապահովման միջոցների դիտարկումները, օտարման գոտին պետք է սահմանվեն ըստ անհրաժեշտության: Մասնավորապես, հայցերի/բողոքների ստուգումը՝ ոչ միայն փաստաթղթային վերլուծության միջոցով, այլև դաշտային ստուգումների միջոցով, պետք է իրականացվի՝ գնահատելու համար, թե արդյոք այն աշխատում է ծրագրով հաստատված ԲԼՄ-ի համաձայն::

3.5 Մասնակցային արագ հարցում

ԱՄԳ-ն կկիրառի Մասնակցային արագ հարցման (ՄԱՀ) գործիքը՝ բավական որակական տեղեկատվությամբ՝ հիմնականում ՀՕՏԾ-ների իրականացման հատուկ ոլորտների վերաբերյալ ԱԵԱ-երի իմացության վերաբերյալ տեղեկատվությամբ, անընդմեջ փաստաթղթային վերլուծության և տնային տնտեսությունների ուսումնասիրության միջոցով հավաքագրված տվյալներն ամբողջականացնելու նպատակով: ՄԱՀ-ի դեպքում կկիրառվեն տեղեկատվության հավաքագրման հետևյալ գործիքները՝

1. Շահառուների հետ հարցազրույցներ (ՀՀ կառավարության, ԵՔ-ի, Իրականացնող գործակալության, ՄՆՇՎԽ-ի ներկայացուցիչներ և այլն),
2. Գլխավոր տեղեկատուների հետ հարցազրույցներ (ազդեցության ենթարկված համայնքների ղեկավարներ, ոչ պաշտոնական առաջնորդներ և այլն),
3. Խմբերի (Ֆոկուս խմբերի) հետ քննարկումներ կամ ավելի խորը որակական հարցազրույցներ ԱԵԱ-երի հատուկ խմբերի հետ, ինչպիսիք են՝ խոցելի խմբերը (զգալի ազդեցության ենթարկված, օտարված տեղահանված ԱԵՏՏ-ներ, կանայք և այլն),
4. Խնդիրների՝ ներառյալ բողոքարկման դեպքերը, խորը ուսումնասիրություն:

3.6 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երկարաժամկետ գնահատումը կիրականացվի ՀՕՏԾ-ի իրականացումից առաջ և հետո՝ պարզելու համար, թե արդյոք ՀՕՏԾ-ների վերականգնման նպատակներն իրականցվել են, ինչպես նաև ԱԵՏՏ-ների վրա ՀՕՏԾ-ների իրականացման ազդեցությունը գնահատելու

համար: ԱՄԳ-ի երկարաժամկետ մոնիթորինգային առաջադրանքը ներառում է հետևյալ հատուկ գործողությունները՝

- **Ելակետային ուսումնասիրություններ և**
- **ՀՕՏԾ-ին հաջորդող իրականացման գնահատում:**

3.7 <u>Ելակետային ուսումնասիրություն</u>

Ելակետային ուսումնասիրությունը կիրականացվի ՀՕՏԾ-ում հասանելի ելակետային տեղեկատվության և/կամ ՀՕՏԾ-ի պատրաստման տվյալների բազայի հիման վրա, եթե ՀՕՏԾ-ում առկա չէ համապատասխան սոցիալ-տնտեսական ելակետային տեղեկատվություն ԱԵՏՏ-ների վերաբերյալ: Վերջինիս դեպքում ԱՄԳ-ն մեկնարկային հաշվետվության պատրաստման (ուսումնասիրությունների մեթոդաբանության մշակման) փուլում պետք է սահմանի անհրաժեշտ ուսումնասիրությունները: ԱՄԳ-ն Ելակետային ուսումնասիրությունը պետք է իրականացնի մինչև փոխհատուցումների վճարումը: Ուսումնասիրությունը կընդգրկի ԱԵՏՏ-ների մեկ ներկայացուցչական նմուշ մարդահամարի ցանկի հիման վրա՝ դասակարգված ըստ ազդեցության տեսակի և խստության: ԱՄԳ-ն յուրաքանչյուր ՀՕՏԾ-ի համար կընտրի ԱԵՏՏ-ներ՝ հիմնվելով դասակարգման նմուշի վրա. նմուշները կկազմվեն այնպես, որ ներառեն ԱԵՏՏ-ների բոլոր տեսակները, ըստ դրանց ազդեցության:

Միևնույն ժամանակ, միայն քանակական վերլուծությունը բավական չի լինի հասկանալու համար ԱԵՏՏ-ների կենսամակարդակի ելակետային կարգավիճակը: Այս նպատակով ԱՄԳ-ն նաև կձեռնարկի որակական հարցազրույցներ ծրագրի շահառուների և գլխավոր տեղեկատուների հետ:

Խորհրդատուն պետք է նաև կիրառի դեպք-վերահսկողություն ուսումնասիրության մոտեցումը՝ պարբերություն 2.2.2-ում նկարագրված ազդեցության գնահատման օրինաչափությանը համապատասխանելու համար:

Ելակետային ուսումնասիրության մեթոդը կհանդիսանա ՀՕՏԾ-ին հաջորդող գնահատման հիմքը՝ հնարավորություն ընձեռելով ճշգրտորեն համեմատել իրավիճակը/պայմանները ծրագրի իրականացումից առաջ և հետո:

Հարցերի ամփոփ պատասխանները հիմք կհանդիսանան կոնկրետ ցուցանիշներ սահմանելու համար, որոնցով կչափվեն (քանակապես) ՀՕՏԾ իրականացման տարբեր ոլորտները:

3.8 <u>ՀՕՏԾ-ին հաջորդող գնահատում</u>

ՀՕՏԾ-ների իրականացման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում պետք է իրականացվի ՀՕՏԾ-ին հաջորդող Գնահատում՝ հայտնաբերելու համար, թե արդյոք ՀՕՏԾ-ի նպատակներն

իրագործվել են, թե ոչ: ՀՕՏԾ-ին հաջորդող գնահատումը կանդրադառնա հետևյալ գլխավոր թեմաներին՝

- ԱԵՏՏ-ների վրա ՀՕՏԾ իրականացման ազդեցության գնահատում,
- ԱԵՏՏ-ների բավարարվածության գնահատում՝ գույքերի ու իրավունքների, վճարումների ժամկետների, հասանելի ֆինանսական միջոցների և վճարումների գնահատմամբ և այլն,
- ՀՕՏԾ իրականացման արդյունավետության գնահատում և
- Քաղված դասերը:

ԱՄԳ-ն վերը ներկայացված տեղեկատվությունը կհավաքագրի հետևյալ մեթոդաբանական գործիքների կիրառման միջոցով՝

- Վերջին փուլի ուսումնասիրություն, որ կանդրադառնա ԱԵՏՏ-ների կենսամակարդակին, ՀՕՏԾ իրականացման ազդեցությանը, ԱԵՏՏ-ների զոհունակությանը և այլն,
- Որակական փորձագիտական հարցազրույցներ շահառուների և գլխավոր տեղեկատուների հետ,
- Խմբային քննարկումներ կամ որակական հարցազրույցներ խոցելի ԱԵՏՏ-ների հատուկ խմբերի հետ,
- Համապատասխան հաշվետվությունների և նյութերի փաստաթղթային վերլուծություն:

ԱՄԳ-ն կանցկացնի վերջին փուլի ուսումնասիրություն՝ ընդգրկելով ԱԵՏՏ-ների քանակը, որոնք կապահովեն 95% վստահության աստիճան և 5% Վստահության մակարդակ: Իրականում, Վերջին փուլի ուսումնասիրությունը կլինի Մինչ-ՀՕՏԾ փուլում իրականացված Ելակետային ուսումնասիրության ընդարձակված տարբերակը:

4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Խորհրդատուն պետք է ունենա զարգացման ծրագրերի շրջանակներում մոնիթորինգի, ուսումնասիրությունների իրականացման առնվազն երեք տարվա փորձ: ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտագրի (2009) և ՀՕՏ-ին առնչվող ՀՀ օրենքների և կանոնակարգերի իրազեկվածությունը առավելություն է:

Խորհրդատուն պետք է մոբիլիզացնի որակավորված փորձագետներից կազմված մասնագիտացված թիմ՝ սույն հանձնարարականն իրականացնելու համար: Աշխատանքային խումբն առնվազն պետք է ներառի հետևյալ փորձագետներին՝

- աշխատանքային խմբի ղեկավար/սոցիալական զարգացման մասնագետ,
- սոցիոլոգ,

- իրավաբան:

Խորհրդատուն կնշանակի աշխատանքային խմբի ղեկավար, որ պատասխանատու կլինի աշխատանքների համակարգման, աշխատանքներում համապատասխան փորձագետների ներգրավումն ապահովելու և բարձրորակ արդյունքները ժամանակին ներկայացնելու համար, ինչպես նաև ԻԳ-ի հետ Տրանշ 2-ի շրջանակներում համագործակցելու համար:

Խորհրդատվական ծառայությունների մատուցումը ակնկալվում է 24.45 մարդ/ամիս, ընդհատումներով, նախնականորեն 2016 թվականի հոկտեմբերից մինչև 2018 թվականի նոյոմբեր: Սույն հանձնարարականի իրականացման ընթացքում Խորհրդատուն կօգտագործի իր գրասենյակը, տրանսպորտի միջոցները և սարքավորումները:

Աշխատակազմի անդամների որակավորման նկարագրական չափորոշիչներ՝

Պաշտոն	Ներգրավվածություն (մարդ-ամիս)	Ընդհանուր նվազագույն փորձ (տարի)	Ծրագրին հատուկ փորձ (տարի)	Մասնագիտացման բնագավառ	Առաջադրանքները և պարտականությունները
Աշխատանքային խմբի ղեկավար/ սոցիալական զարգացման մասնագետ	2.77	10	3	Սոցիոլոգիա, Մոնիթորինգ և գնահատում, տնտեսագիտություն և իրավունք կամ դրանց առնչվող	Աշխատանքների համակարգում Աշխատանքներում համապատասխան փորձագետների ներգրավման ապահովում և բարձրորակ արդյունքների ժամանակին ներկայացում
Սոցիոլոգ	11.68	8	3	Սոցիոլոգիա կամ դրանց առնչվող	Դաշտում տեղեկատվության հավաքագրման համակարգում Ստացված տվյալների ուսումնասիրություն և վերլուծություն
Իրավաբան	10.00	8	3	Իրավունք, Իրավաբանութ-յուն կամ դրանց առնչվող	Փաստաթղթերի՝ ԱԶԲ քաղաքականությանը և ՀՀ իրավական պահանջներին համապատասխանության վերանայում

5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Իր գործունեությունը սկսելուն պես ԱՄԳ-ն Իրականացնող գործակալությանը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- Մեկնարկային հաշվետվություն և աշխատանքային պլան

- ՀՕՏԾ-ների ելակետային ուսումնասիրության հաշվետվություն
- ՀՕՏԾ-ների իրականացման ուսումնասիրման եռամսյակային հաշվետվություններ,
    - Համապատասխանության առանձին հաշվետվություններ Բաբաջանյան-Հին Սիլիկյան, Հին Սիլիկյան-Աշտարակի մայրուղի, Դավթաշեն–Աշտարակի մայրուղի ճանապարհահատվածների ՀՕՏԾ-ների համար
- ՀՕՏԾ-ին հաջորդող գնահատման հաշվետվություն:

ԱՄԳ-ն հաշվետվությունները պետք է ներկայացնի հայերեն և անգլերեն լեզուներով էլեկտրոնային տարբերակով և տպված 1 օրինակ համապատասխան կից գրությամբ:

6 ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Պայմանագրի արժեքի 5%-ը կվճարվի, երբ հանձնվեն Մեկնարկային հաշվետվությունն ու մանրամասն Աշխատանաքային պլանը, պայմանագիրը ստորագրելուց 6 շաբաթ հետո:
2. Պայմանագրի արժեքի 5%-ը կվճարվի Բաբաջանյան-Հին Սիլիկյան ճանապարհահատվածի Ելակետային ուսումնասիրության հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:
3. Պայմանագրի արժեքի 5%-ը կվճարվի Բաբաջանյան-Հին Սիլիկյան ճանապարհահատվածի Համապատասխանության հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:
4. Պայմանագրի արժեքի 15%-ը կվճարվի Հին Սիլիկյան-Աշտարակի մայրուղի ճանապարհահատվածի Ելակետային ուսումնասիրության հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:
5. Պայմանագրի արժեքի 15%-ը կվճարվի Հին Սիլիկյան-Աշտարակ ճանապարհահատվածի Համապատասխանության հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:
6. Պայմանագրի արժեքի 10%-ը կվճարվի Դավթաշեն-Աշտարակ մայրուղի ճանապարհահատվածի Ելակետային ուսումնասիրության հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:
7. Պայմանագրի արժեքի 10%-ը կվճարվի Դավթաշեն-Աշտարակ մայրուղի ճանապարհահատվածի Համապատասխանության հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում:
8. Պայմանագրի արժեքի 35%-ը կվճարվի ՀՕՏԾ-ին հաջորդող գնահատման

հաշվետվությունը հանձնելուն պես, ԾԻԳ-ից աշխատանքների իրականացման մեկնարկի մասին կարգադրություն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում: